«Ավելիաց» ՍՊԸ

Գործարար համառոտ ներդրումային ծրագիր

ք. Երևան, Քանաքեռ, Շրջանցիկ թունել 52/1 հասցեում գտնվող՝ 4-րդ կարգի վթարային աստիճանի 871.9 մ^2 մակերեսով անշարժ գույքի, ինչպես նաև դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար հատկացված 0.2157 հեկտար մակերեսով հողամասի ձեռքբերման նպատակի

Երևան 2019

№ 09/3949-19
0

1. Ընդհանուր տեղեկատվություն

1.1. Ձեռնարկության լրիվ անվանումը և իրավաբանական հասցեն

«Ավելիաց» ՍՊԸ ք. Երևան, Քանաքեռ, շրջանային թունել 2/5 (գործարան):

1.2. Հիմնական սեփականատերերը

Իրավաբանական անձ – չկա

Ֆիզիկական անձ – Թ. Թադևոսյան, Է. Բաղդասարյան

2. Ընկերության համառոտ բնութագիրը

«Ավելիաց» ՍՊԸ-ն ստեղծվել է 09.11.2004թ և սկզբնական շրջանում իր գործունեությունը ծավալել է հացամթերքների արտադրության ոլորտում: 2013թ. Ընկերությունը ներդրումային ծրագրի իրականացման միջոցով, զինվելով ժամանակակից սարքավորումներով, սկսել է բացառապես տեղական հումքով պահածոյացված և չորացված (ջրազրկված) սննդամթերքի արտադրությունը: Գործունեության բավականին կարճ ժամանակահատվածում իր ուրույն տեղն է գտել պահածոյացված և չորացված (ջրազրկված) սննդամթերքի շուկաներում, այդ թվում նաև արտաքին:

Ընկերությունն իր “Nayiri Food” բարձրորակ ապրանքանիշով արագ ճանաչում է գտել ոչ միայն ՀՀ-ում, այլ նաև Ռուսաստանի Դաշնությունում, Իսպանիայում, Ֆրանսիայում և Հոլանդիայում: 2018թ. դրությամբ արտադրանքի տարեկան ծավալը կազմել է շուրջ 550.000.000 դրամ, որի գրեթե 65 տոկոսը արտահանվել է արտաքին շուկաներ: Ընկերությունն արտադրում է շուրջ 90 տեսակի պահածոյացված և չորացված (ջրազրկված) մրգեր, ինչպես նաև բանջարեղեն:

2016թ.-ից Ընկերությունը նպատակ ունենալով դիվերսիֆիկացնել արտադրանքի տեսականին՝ ներդրել է նաև թունդ ալկոհոլային խմիչքների, մասնավորապես «Կալվադոս»-ի արտադրություն՝ դրա համար մթերելով բացառապես տեղական հումք (խնձոր):

Ընկերությունում ներդրված է ISO 22000 սննդամթերքի անվտանգության կառավարման միջազգային համակարգը:

Աշխատողների մշտական միջին թվաքանակը կազմում է շուրջ 53 մարդ, իսկ սեզոնին այն հասնում է 130-ի:

Այսօր արտադրանքի և արտահանման պահանջարկը մոտ 2-3 անգամ գերազանցում է առկա արտադրական հզորությունները, ինչը հնարավոր է իրականացնել միայն արտադրական տարածքների ընդլայնման միջոցով:

3. Ներդրումային ծրագրի էությունը

«Ավելիաց» ՍՊԸ ներդրումային ծրագիրը նախատեսում է իրականացնել՝ Ընկերության տարածքին անմիջապես հարակից՝ ք. Երևան, Քանաքեռ, Շրջանցիկ թունել 52/1 հասցեում գտնվող՝ 4-րդ կարգի վթարային աստիճանի 871.9 մ^2 մակերեսով անշարժ գույքի, ինչպես նաև դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար հատկացված 0.2157հա մակերեսով հողամասի ձեռքբերման միջոցով: Նախատեսվում է Ընկերության ժամանակակից նոր արտադրական հզորությունների ստեղծում և ընդլայնում, տեղական մթերվող հումքի ծավալների կրկնապատկում, արտադրանքի և իրացման ծավալների կրկնապատկում, տեսականու էական ավելացում՝ այդ թվում արտահանման ծավալների, շուրջ 45 նոր աշխատատեղերի ստեղծում, պետական բյուջե վճարվող հարկերի ավելացում:

4. Ներդրումային ծրագրի բնութագիրը

Ընկերության տարածքին անմիջապես հարակից՝ ք. Երևան, Քանաքեռ, Շրջանցիկ թունել 52/1 հասցեում գտնվող՝ 4-րդ կարգի վթարային աստիճանի 871.9 մ^2 մակերեսով անշարժ գույքի, ինչպես նաև դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար հատկացված 0.2157հա մակերեսով հողամասի (այսուհետ նաև Տարածք) տարածքում իրականացվող ներդրումային ծրագիրը ներառում է հետևյալ միջոցառումները.

1. Ընկերության տարածքին անմիջապես հարակից՝ ք. Երևան, Քանաքեռ, Շրջանցիկ թունել 52/1 հասցեում գտնվող՝ 4-րդ կարգի վթարային աստիճանի 871.9 մ^2 մակերեսով անշարժ գույքի, ինչպես նաև դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար հատկացված 0.2157հա մակերեսով հողամասի ձեռ բերում - **15.500.000** դրամ:
2. Նոր արտադրական մասնաշենք կառուցելու համար վերոհիշյալ Տարածքում առկա 4-րդ աստիճանի վթարային և կիսաքանդ շինության ապամոնտաժում, շինարարական աղբի հեռացում և տարածքի բարեկարգում, ըստ մասնագիտական նախնական հաշվարկների՝ - **16.500.000** դրամ:
3. Տարածքում նոր արտադրական հզորությունների համար 900 քմ մակերեսով մասնաշենքի (մուդուլի) կառուցում՝ ըստ մասնագիտական նախնական հաշվարկների (նյութածախսը) – **60.500.000** դրամ:
4. 900 քմ մակերեսով մասնաշենքի կառուցապատման, ինչպես նաև արտադրական ենթակառուցվածքների ստեղծում՝ պարիսպ, ճանապարհ, ջուր, գազ, էլեկտրականություն, գոլորշի, կապ, անվտանգություն, աշխատանքի անվտանգություն, հակահրդեհային անվտանգություն՝ ըստ մասնագիտական նախնական հաշվարկների՝ **45.200.000** դրամ:
5. Պահածոյացված և չորացված (ջրազրկված) սննդամթերքի, ինչպես նաև «Կալվադոսի» արտադրության ընդլայնման համար Ավստրիական, բուլղարական և մոլդովական

արտադրության ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումների և տարողությունների ձեռք բերում և տեղակայում, այդ թվում.

- **<u>պահածոյացված և չորացված (ջրազրկված) սննդամթերքի արտադրության համար.</u>**

5.1. մրգի և բանջարեղենի թունելային չորանոց - 2 հատ - **57.900.000** դրամ:

5.2. պահածոյի տարայի պիտակավորման գծային մեքենա - 1 լրակազմ - **19.210.000** դրամ:

5.3. պահածոյի պտուտակավոր կափարիչ փակող մեքենա - 1 լրակազմ - **21.800.000** դրամ

5.4. 10մ^3 տարողությամբ ըմպելիքի պահպանման համար չժանգոտող պողպատից ուղղահայաց տարողություններ - 2 հատ - **7.800.000** դրամ

- **<u>«Կալվադոս»-ի արտադրության համար.</u>**

5.5. 400լ տարողությամբ կաղնու փայտից հնեցման տակառներ - 25 հատ – **4.250.000** դրամ (շուկայական արժեքով):

5.6. Հայկական «Կալվադոս»-ի ներքին և արտաքին շուկաներում առաջ մղման համար ապրանքային նշանի գրանցում, գովազդային պարագաների ձեռք բերում և մարքեթինգային միջոցառումների իրականացում - **2.100.000** դրամ:

6. սարքավորումների տեղակայում, կարգաբերում և մասնագետների ուսուցում - **9.000.000** դրամ:

Ներդրումային ծրագրի ընդհանուր արժեքը՝ **259.760.000** դրամ

Հնարավոր շեղման հավանականությունը 10-15%:

5. Ներդրումային ծրագրի ֆինանսավորման աղբյուրներ

Նախագծի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել ընկերության ֆինանսական միջոցների և ՓՄՁ ՈՒՎԿ ներգրավված վարկային միջոցների հաշվին:

Ներդրումային միջոցներ	Գումարը (ՀՀ դրամով)
Սեփական միջոցներ	23.150.000
Այլ ներդրումներ	137.700.000
Վարկային միջոցներ	98.910.000
Ներդրման գումարի չափը	259.760.000
Ներդրման գումարի տոկոսային դրույքը՝ վարկային միջոցների համար	8% (տարեկան)

6. Ներդրումային ծրագրի իրականացման փուլերը

6.1. 1-ին փուլ - տարածքի ձեռք բերում, պետ. գրանցում, շինության ապամոնտաժում, աղբի հեռացում և տարածքի բարեկարգում - 2019թ.

6.2. 2-րդ փուլ Արտադրական մասնաշենքի տեղակայում/կառուցում - 2019թ. - 2020թ.

6.3. 3-դր փուլ Արտադրական ենթակառուցվածքների ստեղծում – 2020թ.

6.4. 4-րդ փուլ Տեխնոլոգիական սարքավորումների և տարաների տեղակայում, կարգաբերում, անձնակազմի ուսուցում – 2020թ.

6.5. 5-րդ փուլ Նոր աշխատատեղերի ստեղծում - 2020թ.

7. Ներդրումային ծրագրի ետ գնման ժամկետը

ներդրումային ծրագրի ետ գնման ժամկետը՝ հաշվի առնելով տեխնոլոգիական սարքավորումների մատակարարման, տրանսպորտային և այլ հնարավոր ժամանակային և բնակլիմայական գործոնների առկայությունը, ըստ նախնական հաշվարկների կկազմի 5-6 տարի:

8. Ներդրումային ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները.

1. չորացված (ջրազրկված) մրգերի, բանջարեղենի արտադրական տարեկան ծավալների ավելացում մոտ 2 անգամ – 900մլն ընդհանուր հասույթով:
2. «Կալվադոսի» արտադրության ծավալների ավելացում մոտ 2 անգամ – 180 մլն ընդհանուր հասույթով:
3. արտահանման ծավալների ավելացում՝ մինչև – 720մլն դրամ ընդհանուր հասույթով:
4. բացառապես տեղական հումքի մթերումների ծավալների ավելացում - 2 անգամ:
5. Արտադրանքի տեսականու ընդլայնում – 20 %
6. նոր աշխատատեղերի ստեղծում – 45 միավոր, միջինը 125.000 դրամ ամսական աշխատավարձով:
7. ՀՀ բյուջե վճարվող հարկերի ավելացում:
8. Արտադրանքի ինքնարժեքի և դրա հետևանքով իրացման գների իջեցում մինչև - 20%
9. Արտադրանքի որակի բարձրացում, ապրանքանիշի ճանաչելիության և արտաքին շուկաների աշխարհագրության ընդլայնում:
10. Ձեռք բերել առանց խափանումների աշխատող ձեռնարկության համբավ, իրականացնել մարքեթինգային գրագետ քաղաքականություն և անկախ արտադրության սեզոնայնությունից իրացումը կազմակերպել համաչափ: